ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արմեն Յուրիկի Ղազարյանի** և նույն ամբիոնի ասիստենտ **Գառնիկ Հրահատի Առաքելյանի «Linux օպերացիոն համակարգեր» ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է ՀՊՏՀ կրթական ծրագրերում ներառված «Linux օպերացիոն համակարգեր» դասընթացի շրջանակներում դասերի անցկացման համար: Ձեռնարկում ներկայացված են Linux օպերացիոն համակարգերի նշանակությունը, դրանց մշակման անհրաժեշտությունը, ժամանակակից համակարգերի առջև դրված խնդիրները, հիմնական հասկացությունները և դրանցով աշխատելու ամենակարևոր հմտությունները: Ձեռնարկում ուսումնասիրվում են բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ ֆայլերի և գործընթացների կառավարում, ցանցային գործիքներ, ֆայլի կառավարման համակարգեր: Ձեռնարկից օգտվողները կարող են ամրապնդել իրենց տեսական գիտելիքները գործնական աշխատանքների միջոցով: Ձեռնարկում առկա են նաև առաջադրանքներ ինքնուրույն կատարման համար:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Գրիգորի Սաղյան՝ «ԷյԲիՍիԴոմեն» ՍՊԸ տնօրեն, ՀՀ ինտերնետ կառավարման հանձնաժողովի քարտուղար, «Ինտերնետ հանրություն» ՀԿ խորհրդի փոխնախագահ, Հայ-ռուսական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու:

2) Ս.Աբրահամյան՝ ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի ավագ գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու:

3) Կ.Ա.Խաչատրյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկն ունի կարևոր նշանակություն և կարող է օգտակար լինել ինչպես մասնագիտական կուրսերի, այնպես էլ ոչ մասնագիտական կուրսերի ուսանողների և Linux օպերացիոն համակարգերով հետաքրքրվողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գիտական խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արմեն Յուրիկի Ղազարյանի** և նույն ամբիոնի ասիստենտ **Գառնիկ Հրահատի Առաքելյանի «Linux օպերացիոն համակարգեր» ուսումնական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության, 100 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան